

հուս կը սկսի . եւ ներս կը կրեն գինելից քակոյկները՝ ձաշակներով հանդերձ, գուցէ եւ առաստակներն ալ (աստ, 79-82, 134), զորս կը բերեն կը դնեն մեկուտի: Եւ ազոցմէ մանաւանդ «Թակոյքն ճախարակեալ եւ յօրինեալ» իրենց հրապուրիչ կազմով ու բովանդակութեամբ «փութացուցանեն զմիտս գինարքուացն» (Նար. 342), ինչպէս կը կոչուին հիմայ մեր բազմականք ուրիշ մատենագրերէ եւս (Փիլ. Ճոք. 18. Խոր. 276, ծն. 3), եւ որ հանգանակիցք եւս կ'ըսուին իրարու (Լմբ. Թղթ. 241), կազմուած հանգանակ բառէն՝ որ արբեցութիւն ալ կը նշանակէ (Նար. 517), եւ հանգանակոյ՝ արբեցող (Աշտ. 14):

Ներս կը բերեն նաեւ նուագները, տաշտերը, բաժակներն եւ ուրիշ ըմպանակներ, գործածուած ըստ դարուն եւ կոչնականաց վիճակին (աստ, 58-79), գուցէ նաեւ ըմպելեաց զանազանութեան համեմատ (աստ, 22-3), եւ կը սկսին լեցնել ու զետեղել բաժակակալ սկտեղներու վրայ՝ որոցմով պիտի տանին դնեն կոչնականաց առջեւ: Զայս կը ցուցնէ Եղիշէի բացատրութիւնը՝ թէ «անկան (զրուեցան) բաժակակալք յուրախութիւն» (173-4). եւ Պասպ տաշտով խմելու պահուն սկուտղը կը հանգչէր իւր առջեւ. այնպէս որ երբ յանկարծ զարկին